

Ոչ ինչ բան մը . —
 Իսկ մէյմը . —
 Իտ նշան մ' ըլլայ գուցէ
 Սըղնոցիս , որ կը կապուիմ : —
 Կը կապուիս , գայլը կ'ըսէ ,
 Չէս վազեր դու ինչպէս կ'ուզես ամեն դին . —
 Սիշտ չեմ վազեր . բայց ինչ կայ . —
 Շատ մեծ բան կայ , այնպէս որ՝
 Քու խորտիկներդ ալ բոլոր
 Իննաւ երբեք չեմ ուզեր .
 Թէ աշխարհքիս գանձն ըլլայ
 Իտ գընովն ես չեմ առներ :
 Գայլն աս կ'ըսէ կը կըծկէ
 Եւ փախչելու դեռ հետ է :

ԼԱՖՈՆԹԻՆ

քա ն ա ս ի ր ա կ ա ն

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ Ո Ջ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ոչք վարեին արտասուօք ցնծութեամբ հեճեցեն .

ՍԶԾ. ՔԻԵ

Դու զթափառեալս յանդորր հաներ զառաքաստ .
 Յօղունս ի հոյզ կանաչացաւ բարեբաստ .
 () րհնեմ ըզքեզ , Տէր , զշիջանուտ լապտերոյս
 Կենդանատուդ արծարծանէ շունչ ըզլոյս :

Սըրըրկավար , իբրեւ արծուին անփետուր
 Իարձր ի կաղնոյն անկեալ թըփոյն առաթուր ,
 Սանուկս աղկաղկ , ծանեայ զօրէնս աղետից .
 Ի խանձարրոցս առին հողմունք ծըփալից :

Ինձ կեանք , այո՛ , սկսեալ տիոցս են յայգուէ ,
 Թէպէտ երկին ըզծաղկունս ոչ հարկանէ ,
 Եւ չըկամին իսկ զի էակն անխընամ
 Եւ իսկին աւուրց խառնէ զարտօսը աղեկամ :

Ի՞՞՞ ի ժըմիտ ինձ մանկութիւն զիւր պատրանս ,
 Օփառաց , սիրոյ , եւ զպանծանացն ապագայս .
 Հեշտ երազոցս այլ սիրտս ըզհետ մինչ կըրթէր ,
 Ի դադաղին , աւանդ , զարթեայ ես գիշեր :

Լ'նդ ի միջոյ վըտարեցի զիս եղբայր ,
Հանդարտագին , զի չէին ցաւքս խեղճ մըտաց .
Յուղարկութեանն ըզհետ բացուստ գընացի ,
Որբոյն նըւագ մեռելոց գոյ լըսելի :

Լ'չք վերամբարձ ընթանայի 'նդ խորխորատ ,
Յոչ ինչ եդեալ զբախտիս նախատու ապիրատ .
Բոցք ի ներքուստ ի խորհըրդոց իմ փայլեաց ,
Եւ զճակատուս իմ էջ լեզուն հրասըլաց :

Նաանեալ ոգիս զսուրբ զառանցանս Պատմոսի ,
Օնախորդ սարսուռ , զսարսուռ որ գայն եւ ըզկնի .
Տըխուր հոգիս էր եւ քնարիս իմ'նըւագ
Հանգոյն ձայնիցն որ յարտասուս գան ըզցայգ :

Տեսի զփախուստ ես անտըրտունջ խընդութեան ,
Տէր , զանձն իմ քո դատապարտեալ էր լըքման .
Լ'նմուռնչ , զերբեակ համայն կալայ պողոտայ ,
Եւ ոչ անէծս ետու աւուր յոր ծընայ :

Լ'յս աւասիկ ճըշմարտութիւն զոր յայտնեմ .
Երկինք ինձ յուշ յոչընչութեանս իմ եղեն .
ՕՏէր օրհնեցէք . ոչխար գառինն գայ 'հրաւեր ,
Բարձրեալն ըզՏէր ես կարդացի , եկըն Տէր :

“ Գընա , որդեակ , օրէնքս , ասէ , չեն ըստուար ,
” Դու որ եւ զցայգն իսկ զիմ հարեր ճանապարհ ,
” Օ երանելեաց արկցես հանդերձ դու փառաց ,
” Եւ զձեռսդ ի մէջ լուանայցես անմեղաց ” :

Ոչ եւս հեռուստ քեզ զկեանս ձօնեմ մըրազգեաց
Փառք , յաւիտեանց ջահուն անմահ ցոլադարձ ,
Ոգւոյն ի գնացս իւր՝ հետք սուրբ , վեհ ի ճաճանչ ,
Կամ ի շիրմէն բըխեալ նըշոյլ հիասքանչ :

Հրեշտակ զսըրտիւս այսօր հանգեալ թեւապար .
Յաչս ի 'կերա՝ որբացեալն ոչ է օտար .
Լ'ուրցս իմ ժամք են առ նովաւ գեղափայլ .
Օ ի լուծ իւր քաղցր եւ նորին բեռն հեշտընկալ :

Դու զթափառեալս յանդորր հաներ զառագաստ ,
Յօղունս ի հոյզ դալարացաւ բարեբաստ .
() րհնեալ ես , Տէր , որ զշիջանուտ լապտերոյս
Կենդանատուդ արծարծանէ շունչ ըզլոյս :